ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Ավետիսյանին 2017թ. հուլիսի 17-ից 19-ը Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն,ազգանունը՝

Սերգեյ Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2017 թվականի հուլիսի 17-ից 19-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական Տնտեսական Հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

«Աէրոֆլոտ» և «Պոբեդա» ավիաընկերությունների տնօրենների խորհուրդների անդամների հետ հանդիպումներ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի իրավասու մարմինների ղեկավարների տեղակալների խորհրդակցությանը մասնակցություն

6. Հանդիպումներ, քննարկված հարցեր՝

- Հանդիպումներ «Աէրոֆլոտ» և «Պոբեդա» ավիաընկերությունների տնօրենների խորհուրդների անդամների հետ ս.թ. հուլիսի 17-ին և 18-ին՝ Հայաստանի Հանրապետությունում «Աէրոֆլոտ» և «Պոբեդա» ավիաընկերությունների գործունեությունների զարգացման, համագործակցությունների մակարդակն առավել խորացնելու և թռիչքների ուղղությունների ավելացման երկկողմ արդյունավետ համագործակցության հարցերի շուրջ.
- «Եվրասիական տնտեսական միության շրջանակում ավիացիոն պատահարների քննության հանձնաժողով ստեղծելու մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշման նախագծի քննարկում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների

տրանսպորտի ոլորտի իրավասու մարմինների ղեկավարների տեղակալների հետ.

7. Պայմանավորվածությունները և առաջարկությունները՝

- «Աէրոֆլոտ» և «Պոբեդա» ավիաընկերությունների տնօրենների խորհուրդների անդամների հետ քննարկումների արդյունքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետագա համագործակցության հարցերի շուրջ.
- Քննարկվել է «Եվրասիական տնտեսական միության շրջանակում ավիացիոն պատահարների քննության հանձնաժողով ստեղծելու մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշման նախագիծը, որի ընթացքում Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարությանն առաջարկվել է ներկայացնել հարցի վերաբերյալ ֆինանսատնտեսական հիմնավորում, միջոցառումների պլան, հիմնավորում՝ ԻԿԱՕ փաստաթղթերի կցմամբ և այլն: Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հարցի քննարկումը շարունակել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի իրավասու մարմինների ղեկավարների 8-րդ հանդիպմանը՝ ս.թ. օգոստոս ամսին՝ Ղրղստանի Հանրապետությունում:

8. Գործուղվողը՝

Սերգեյ Ավետիսյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

21.07.2017թ.